

# ԱԶՂԱԿ

## Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ

(ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՑՑԱՄԵԱԿ)

ՇԱԲԱԹ  
13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003

### ՄԵՐ ԽՈՍԵԸ

#### ՅԱՆՈՒՆ ՀԱՅՈՒՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԵԱՆ


Հայկական Յեղասպանության իրողությունը, անկախաբար հայուն պատճառած անբացատրելի մորմոքէն, անջնջելի վիրաւորանք պիտի պատճառէր նաեւ, եթէ նոյն այդ թուականներուն՝ Արեւմտահայաստանի տարբեր շրջաններէն մինչեւ Մուսա Լեռ, անկէ մինչեւ Շապին Գարահիսար ու այլուր՝ հայկական դիւցապներգութեան նոր էջեր չգրուէին:

Հակառակ Յեղասպանության ահաւոր տարողութեան, եւ հակառակ ցեղասպանին անհամեմատելիօրէն գերակայ ուժին, գտնուեցան հայկական արժուէրոյններ, որոնք արժանապատի ու գիտակից մահը նախընտրեցին եւ քաջաբար դիմադրութեան կոչի մղեցին ջարդարարին դէմ:

1915ի Ապրիլէն սկսեալ տարագրութեան ճամբան բռնած հայկական կարաւաններուն կողքին մեր ժողովուրդը ունեցաւ նաեւ օրհասական մաքառումներ: Մեր ժողովուրդին արի վաւակներէն ոմանք, ինչպէս մուսալեռցիք, անխնայ կոչի մղեցին թշնամիին դէմ, նահատակուեցան եւ իրենց սրբապան արիւնով բարձր պահեցին հայուն արժանապատուութիւնը նոյնիսկ այդ սեւ թուականներուն:

Այսօր, 88 տարի ետք, ամենայն երկիւղածութեամբ ու միաժամանակ հպարտութեամբ անգամ մը եւս կը խոնարհինք Մուսա Լեռան հերոսամարտին ինկած նահատակներուն յիշատակին առջեւ: Անոնք նահատակուեցան, որպէսզի ապրին մնացեալները, մեծամասնութիւնը, որպէսզի ապրի ու գոյատեւէ ազգը:

## ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ



Միջերկրականի արեւելեան ափին գտնուող Մուսա Լեռան շրջանի հայաբնակ վեց գիւղերը՝ Պիթիաս, Հաճի - հապիպլի, Եողուն Օլուգ, Խտրը Պէյ, Վագրֆ եւ Քեպուսիէ Մեծ Եղեռնի օրերուն 6,811 բնակիչ ունէին:

Մուսա Լեռան ժողովուրդը 30 Յուլիս 1915ին ստացաւ տեղահանութեան պաշտօնական հրամանը, որուն համաձայն, Անտիոք շրջանին մէջ ապրող ամէն հայ ութ օրուան ընթացքին պէտք է ձգէր իր տունն ու տեղը եւ պատրաստ ըլլար գաղթել կառավարութեան որոշած վայրը:

Այս պայմաններուն տակ վեց գիւղերու ներկայացուցիչները խորհրդակցութիւն ունեցան եւ մեծամասնութեամբ որոշեցին ինքնապաշտպանութեան դիմել եւ զայն կազմակերպել Մուսա Լեռան վրայ:

Մինչ այդ, սակայն, ժողովուրդին մէկ մասը՝ 2,080 հոգի բռնեց գաղթի ճամբան, իսկ մնացեալ 4,231 հոգին որոշեց լեռ բարձրանալ:

Յուլիս 31ին սկսաւ լեռ բարձրանալու գործողութիւնը. ծեր, կին, երիտասարդ եւ երեխայ, իրենց ունեցած պարէնով, անասուններով եւ զէնքերով բարձրացան Մուսա Լեռ. երեք օրէն արդէն ամբողջ ժողովուրդը լեռան բարձունքին, Թաթար Ալան փոքրիկ սարահարթին վրայ հաւաքուած էր, ուր վրաններ լարեցին եւ խրճիթներ շինեցին, եւ ուր տեղաւորուեցաւ ժողովուրդը:

Միաժամանակ կազմուեցաւ զինուորական մարմին մը որ պիտի վարէր պատերազմական գործողութիւնները. կոռուղները բոլորը հազի վեց հարիւր հոգի էին, իսկ զէնքն ու զինամթերքը՝ սահմանափակ: Լեռան պաշտպանութիւնը չորս շրջանի բաժնուեցաւ:

Ինքնապաշտպանութեան աշխատանքները տակաւին չէին աւարտած, երբ թուրք երկու հարիւր զինուորներ, Սուէտիոյ միտիւր Խալէտի գլխաւորութեամբ, Օգոստոս 7ին յարձակման անցան Մուսա Լեռան դիրքերուն ուղղութեամբ, բայց բուն դիմադրութեան հանդիպեցան եւ վեց ժամ տեւած կոչիներէ ետք, տասնեակ մը զոհեր եւ երկու տասնեակ վիրաւորներ տալով նահանջեցին:

Առաջին այս անյաջողութենէն ետք, Օգոստոս 10ին, արեւածագէն առաջ, թրքական հինգ հազարնոց բանակ մը, թնդանօթներով միասին յարձակման անցաւ: Տակաւին արեւը չծագած թնդանօթները սկսան ոմբակոծել հայկական դիրքերը:

Ուժերը անհաւասար էին, եւ հայոց վիճակը՝ բաւական ծանր ու ճակատագրական, բայց կոռուղները անվեհեր գոյամարտեր մղեցին յորդառատ անձրեւին տակ, մինչեւ որ մշուշը ծածկեց Լեռան գագաթը. ճակատամարտը տեւեց տասներկու ժամ. թուրքերը տուին մօտաւորա-

Շար.ը՝ էջ 7

ملحق ازيك

# ՄՈՒՍԱ-ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԸ ԿԱՄ ՈՐՈՂՑ ԿԸ ՊԱՐՏԻՆՔ ՄԵՐ ԱՅՍՕՐԸ

Իրաւամբ ըստած է, որ հերոսները անմահ են. իրենք կը նահատակուին՝ ուրիշներուն կեանք տալու համար:

Այս իրականութիւնը հաստատող դէպքերէն է Մուսա-Լերան հերոսամարտը: Արդարեւ, քառասնօրեայ հերոսամարտի ընթացքին 18 մուսալեոցի հերոսներ նահատակուեցան՝ որպէսզի ապրի ժողովուրդը, մուսալեոցին:

Որո՞նք են այս հերոսները:

Անոնք պարզ գիւղացիներ են, անվախ, կոռուղ եւ հայու արժանապատուութեամբ ապրող: Անոնք կը կոչուին՝

- Յակոբ Գարակէօզեան (ըլլէօն-առիծ)
- Յովհաննէս Լուրջեան
- Գրիգոր Նգրուրեան (եհիզպաշի)
- Պաղտասար Մարտիկեան
- Յովհաննէս Գունանեան (Ֆէնտ)
- Պօղոս Անտէքեան
- Պետրոս Փէնէնեան (Անֆաթ)
- Ծապրա Խէյօեան
- Գրիգոր Գըպուրեան
- Սարգիս Շանաքեան (կրօն)
- Աբրահամ Սեւուկեան (սէքլէմեան)

- Պետրոս Հաւաթեան
- Սամուէլ Պոյաճեան
- Սամուէլ Մարգարեան
- Յաբէթ Վանանեան
- Յակոբ Հաւաթեան
- Պարսում Խօշեան
- Միսաք Պայրամեան

Ահաւասիկ, այս հերոսներուն է, որ կը պարտինք մեր այսօրը, մեր կեանքը: Առանց այս հերոսներուն՝ Մուսա Լեռը մեռած էր, անշուք, անյիշատակ: Այս հերոսներն են, որ ստեղծեցին հայու ոգի, հայու քաջութիւն, հայու հերոսամարտ: Համեստ այս գիւղացիները դարձան անմահներ եւ Ա. Համաշխարհային Պատերազմի եւ Հայոց Ցեղասպանութեան մութ հորիզոնին վրայ՝ լոյս սփռեցին եւ լուսաւոր պատմութիւն կերտեցին:

Բայց ինչպէս Ֆրանց Վերֆել կ'ըսէ իր «Մուսա-Լերան 40 օրը» վէպին մէջ, այս հերոսութեան մասնակցեցան բոլորը՝ կին ու աղջիկ, ծեր ու պատանի, երիտասարդներ եւ լեռը իր ծառերով, ժայռերով, կաճաններով ու մշուշով: Այս միակամ ոգին էր, որ տիրապետեց

Մուսա Լերան վրայ եւ այս ոգին շնորհիւ էր, որ մուսալեոցիք դիմադրեցին, կոռուեցան, նահատակներ ունեցան եւ փրկուեցան ստոյգ կոտորուելէ: Անշուշտ նախախնամութեան օրհնութիւնը այս բոլորին վրայ բացաւ փրկութեան ճամբան:

\*\*\*

Տասնամեակներ անցած են այս դէպքերուն վրայէն: Կեանքը լրիւ փոխուած է եւ նոր ժամանակներ են այլեւս: Սակայն հերոսներուն յիշատակը անմահ է:

Ամէն տարուան Սեպտեմբերի երկրորդ շաբաթավերջին, մուսալեոցիք կը խմբուին իրենց այժմու «մայրաքաղաք» Այնճարի մէջ, եւ տհոյ-գունայի կշռոյթին հետ ոտքերնին ամբօրէն գետին կը զարնեն՝ «Լերան խէրը» յիշելու, հերոսներու ոգիով հաղորդուելու: Այսօր այդ պահն է: Հաղորդուինք Մուսա-Լերան հերոսներու ոգիով, ուխտենք տոկալ մինչեւ մեր ամբողջական երազներու իրականացումը:

Ե. ՀԱՒԱԹԵԱՆ

## ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒ ԱՐԱՀԵՏՆԵՐՈՎ...

Գիշերային խոնք լուսութեան մէջ կը վիճէի մտորումներուս հետ: Պէտք էր գտնէի լուծում մը, որ պիտի իմաստաւորէր կեանքիս այդ վայրկեանը: Յանկարծ, ուղղուեցայ դէպի փոքրիկ պատուհանը, որ կը կազմէր երկու մութին մէջ հազիւ նշմարելի, բայց գեղեցիկ պատկերի մը: Երկար արպտումէ ետք, ընկուզենիին սաղարթախիտ ոստերուն ընդմէջէն, աչքերս մխրճուեցան յիշողութեան գունաւոր անդաստաններուն մէջ... պատկերագարդ յու-

շեր՝ լեցուն հեքիաթներով: Չմբան եղանակին, դասերէն ետք, սովորութիւն ունէինք հաւաքուելու փոքր սենեակի մը մէջ եւ լսելու մեծ հօրս պատմութիւնները. «Կիցէ՛յր, չկիցէ՛յր...»: Մուսա լերան բարբառը կ'ամրապնդէր մթնոլորտը եւ մեր նորափոթ ականջները կ'ողողէր պապենական արձագանգներով: Անգին ժառանգութիւն մը... Հիմա, կը փորձեմ յիշել, յիշել ամէն ինչ, կը պտտիմ նոյն սենեակին մէջ եւ կը լսեմ անխօս պատերուն խօսուն հետքերը...

«Կիցէ՛յր, չկիցէ՛յր...»:

Ահաւասիկ, մեծ հայրս իր խոշոր քիթին տակ գծուող ըմբիծաղով կը ներկայանայ ինձի: Կը յիշեմ անոր տխուր եւ միեւնոյն ատեն հպարտօրէն ճառագայթող աչքերը, երբ կը պատմէր այն հերոսներուն մասին, որոնք իրենց թեւաւոր ձիերով կը սլանային, կը պայքարէին կրակին ու բոցին դէմ՝ հասնելու խորհրդաւոր լեռներու բարձունքին: Ու պահ մը յանկարծ աչքերը կը մնային անթարթ... Ի՞նչ կար այդ լեռներուն ետին: Սառած աչքերը կը դառնային հսկայ պաստառներ, որոնց վրայ էջ առ էջ կը պատկերուէին հերոսական մարտնչումներ... Վիշապներու դէմ մաքառող հեքիաթային հերոսները կը դառնային բռնակալ թուրքին դէմ կոռուղ հայդուկներ: Կը տեսնէինք հայը, իսկակա՛ն հայը՝ յանդուգն եւ պատ-

ախնդիր: Մեր մանուկ հոգիները կը հրճուէին հայու հպարտութեամբ, եւ կը գտնէինք պատասխանը...

Այդ լեռներուն ետին կար հերոսական պատմութիւն, կար սահմանուած «40 օրերը» եւ... անսահման քաջութիւն:

Բայց ամէն հեքիաթ ունի իր աւարտը: Կը լսուէր դողողոջուն ձայնը. «հեռուն, շա՛տ հեռուն ունինք հայրենիք մը...»: Եւ Մուսա լերան բարձունքէն կը ցատկէինք Արարատի գագաթին: Հոս էր, որ հեքիաթը կը կնքուէր խոր պատգամով մը... երկու հսկաներ, որոնք իրենց յաղթապանձ էութեամբ կը քանդակուէին մեր սիրտերուն մէջ՝ դառնալով երազ, սէր եւ կարօտ:

Յուշեր՝ լեցուն հեքիաթներով, իսկ հեքիաթներու արահետներով՝ պատգամներ:

Յոգնած կոպերս «բարի գիշեր» կ'ըսեմ ինձի, մինչդեռ կան շա՛տ հեքիաթներ:

ԹԱՄԱՐ ՀԵՐԿԵԼԵԱՆ

**ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 88ԱՄԵԱԿ**


**Հ. Յ. Գ. «ԿԱՐՄԻՐ ԼԵՌ» ԿՈՄԻՏԵԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ԱՂԱՍԻ (ՊՕՂՈՍ ԹԱՍԼԱՔԵԱՆ)**

Արուեստի գործերու ցուցահանդէսին բացումը տեղի կ'ունենայ այսօր՝ Ուրբաթ, 12 Սեպտեմբեր 2003, երեկոյեան ժամը 7:00ին, «Սարգիս Չէյթլեան» ժողովրդային տան մէջ:

Խօսք կ'առնէ

**ՂՈԿՏ. ՍՈՎԱԵՍ ԾԻՐԱՆԻ (ՀԵՐԿԵԼԵԱՆ)**

ԾԱՆՕԹ.- Ցուցահանդէսը բաց է մինչեւ Կիրակի, 14 Սեպտեմբեր 2003ի երեկոյեան:



# ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԱՅԵՐՈՒ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԻՒՆԸ (ՄԵՊՏԵՄԲԵՐ 1915)

Առաջին Աշխարհամարտին ֆրանսական երրորդ նաւատորմին ծովակալ Տարթիժ Տի Ֆուրնէ, իր «Ծովակալի մը պատերազմի յիշատակները» գիրքին մէջ, կ'անդրադառնայ Մուսա Լերան ժողովուրդի ապատագրութեան:

Ծովակալը, լեռ ապաստանած հայերու սպանացող վտանգը պահելով, տակաւին վերէն արտօնութիւն չստացած, իր անձնական պատասխանատուութեամբ հրաման կու տայ «պարպելու» լեռը: 14 Սեպտեմբերին, երբ լեռան փրկութեան գործողութիւնը կ'ամբողջանար, Կիպրոս կը հասնէր ծովակալի հեռագիրին պատասխանը, որով ֆրանսական ծովային նախարարութիւնը կը հարցնէ. «ո՞ւր է Մուսա Լեռը»:

Սեպտեմբերի առաջին օրերուն, Պրիսոն մարտանաւու նաւապետի հրամանատարութեան ենթակայ «Կիշէն» յաճանար, երբ Անտիոքի հիւսիսը կ'եզերէր, ցամաքի վրայ նշաններ տեսաւ: Մակոյկ մը դրկեցին ծովեզերք եւ տեղեկացան, թէ հայեր, թուրքերու կողմէ ջարդի սպառնալիքին ենթակայ, բարձրացած են ժէպէլ Մուսայի (Մովսէսի Լեռ) բարձունքները: 6 Սեպտեմբերին T.S.F. իմաց տուաւ, եւ անմիջապէս «Ժան տ'Արք»ով վերամիացայ իրենց: Հայ ղեկավարներէն՝ Փիեռ Տրմլագեան կը բարձրանայ նաւ. կը խնդրէ պարպել անգէն ժողովուրդը, դեռ վեց ամիս պատրաստ դիմադրելու թուրք զօրքերուն, եթէ իրենց հայթայթէինք ալիւր, աղ, վառօդ, եւ կապար: Մուսա Լերան գաղթականները իրենց հայրենակիցներուն կրատրական կեցածքը չունէին: Պատրաստ էին դիմադրութեան եւ նոյնիսկ օժտուած գործիքներով՝ «լեցնելու» իրենց պարապ փամփուշտները: Բայց կացութիւնը ծանրակշիռ էր: «Պաշտպանութիւնը»ներու խումբեր պաշարած էին լեռը, հետզհետէ կը յառաջանային, կ'առեւանգէին մանուկներ, կիներ, կը տանէին զիրենք հեռուները եւ գազանային՝ ահռելի տեսարաններ կը դրոշմէին այս ողբերգական քստրի իրաքանչիւր հանգրուանը: Ես շուտով հասկցայ, թէ պէտք է փրկել այս դժբախտները: Ժամանակը կը սահէր, եւ ինչ ալ ըսէին իրենք, պէտք էր պարպել բոլորը: Մեկնեցայ Ֆամակուսթա եւ անկէ դիմեցի Կիպրոսի եւ Եգիպտոսի կառավարիչներուն, խնդրելով տեղ տալ Մուսա Լերան հայերուն, որոնք դատապարտուած էին ամբողջական բնաջնջման: Առաջինը կը պատասխանէ, թէ տեղ չունին իրենց համար... (no accommodation for them). երկրորդը՝ թէ տեղեկագրեր է Լոնտոն: Հեռագրեցի ծովային նախարարին՝ տեղեկ պահելու համար... Նախքան իր պատասխանը հասնի ինձի, հրահանգ ստացայ երթալու Տարտանէլ, փոխարինելու համար դեր-ծովակալ Նիգուլը, որ առողջական պատճառաւ վերադարձած էր Ֆրանսա: Անթերի բարեկրթութեամբ, նախարարը կը խնդրէր ինձմէ ընդունիլ այս կացութիւնը. գիտնալով հանդերձ, թէ պաշտօնի կը կոչուիմ հրամանին տակ անգլիացի ծովակալ Ռոպէլի. պարզ ծովակալ մը, որ հանգամանքի բեր-

մամբ օժտուած էր դեր-ծովակալի պաշտօնով: Կը պատասխանէմ, թէ անձնական հարցերը նշանակութիւն չունին, որ կ'ընդունիմ, կ'երթամ Փոր-Սայիտ եւ անկէ կ'ուղղուիմ Մուսա Լեռ, երրորդ նաւապետի հրամանատարութիւնը յանձնելէ ետք ծովակալ Տարթիժի:

Ռուստը ճամբուն վրայ է. քանի մը ժամ կանգ կ'առնենք այստեղ: Ամէն ինչ լաւ կ'ընթանայ: Կղզին, իմ հրամանով վերածուելով պատերազմական նաւու, սկսաւ հաստատել իր հրետանին, իր T.S.F.ը, եւ էլեկտրական լուսարձակները. այժմ կրնար պաշտպանուիլ եւ վայելի ամբողջական ինքնավարութիւն:

10 Սեպտեմբերին հասանք Փոր-Սայիտ եւ 12ին ճամբայ ելանք դէպի Տարտանէլ: Ծովակալ Տարթիժն քաժնուելէ առաջ, իրեն հետ որոշեցի Մուսա Լերան պարպումը: Բոլոր պատրաստ նաւերը դրկուեցան եւ 13ին հայերը սկսան նաւ ելլել: Գործողութիւնը իրագործուեցաւ առանց միջադէպի եւ առանց դժուարութեան: Մեզի կրնար վստիսել միջամտութիւնը թշնամի ընդծովեայի մը, որ 8 Սեպտեմբերին, Ռոտտոսի նաւահանգիստի մուտքին ընկղմած էր մեր օժանդակ փոքր յաճանար՝ «հնդկականը»: 2երեւցաւ եւ 4080 անձեր հաւաքուեցան: Այնտեղ կային խեղճ մանուկներ՝ ծածկուած սպունգ-անձեռոցներով, որոնք կ'անցնէին ձեռքէ-ձեռք, այիքներու ընդմէջէն, կարծես փոքր Մովսէսներ՝ իսկապէս ազատուած ջուրէն եւ որ երբեք պիտի չգիտնան, բացի գրոյցէ, թէ ի՞նչ վտանգէ փրկուած են: Ինչպէս, այդ ժամանակ, երբ ոչ մէկ յստակ պատասխան կար, ո՛չ Լոնտոնէն,



ն'չ այլոր, ազատարար նաւերը կը կատարէին պատերը Փոր-Սայիտ փոխադրելու այս թշուառ մարդիկը: Այնտեղ գտնէ ապահով էին: Այս առաքելութիւնը, որ ծովակալ Տարթիժը եւ իր հրամանատարները շատ լաւ կատարեցին եւ որմով Սուրիոյ նաւատորմը իրատուեց ունի հպարտանալու, այսուհանդերձ մեզ կը թելադրէ կարգ մը պղտոր խոկումներ: Երկար տարիներ վարժուած էինք լսել հայերու ցաւերը, ողբալ այս դժբախտ ցեղին պարբերական ջարդերը, խարանել իրենց դահիճները: Եւ ահաւսիկ 4000 հայեր, շատ հետաքրքրական, որովհետեւ կը պաշտպանէին իրենց հայրենիքը, կրելու փոխարէն իրենց նմաններուն նախապահիրը, ծայրագոյն վտանգի մը դիմաց կը գտնուէին: Անհրաժեշտ էր ապահով վայր մը փոխադրել զիրենք, եւ ժամանակը թանկ էր: Կրնայինք կարծել, թէ իրաքանչիւրը պատիւ զգար ընդունելու զիրենք, անոր մէջ տեսնելու իր մարդասիրութեան լաւագոյն օրինակը, ըմբռնել թանկագին առիթ մը, որ գութ կը շարժէ միայն գրքերու մէջ, լրագիրներու մէջ կամ դասախօսութեանց ժամանակ: Տեսանք ինչ կատարուեցաւ գործնականին մէջ: Պէտք էր իրենց գտնել ապաւէն՝ տեսակ մը բռնութեամբ, եւ այս հարցով չեմ յիշեր ստացած ըլլալ շնորհակալութիւն մը ունէ մէկէն:

«Ծովակալի մը Պատերազմի Յիշատակներ»

ԴԵՐ. ԾՈՎԱԿԱԼ ՏԱՐԹԻՋ ՏԻ ՖՈՒՐՆԷ



## ԱՅՆՃԱՐԸ ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Վաթսունչորս տարեկան Այնճարը իր «հիմնադրութենէն» մինչեւ այսօր հսկայական բարեփոխումներ կրելով ու բարգաւաճելով՝ դարձած է լիբանանցիներու եւ Լիբանան այցելող զբոսաշրջիկներու ուշադրութեան առարկան: Ամառուան գրեթէ բոլոր օրերուն Այնճարի նորակառոյց մուտքէն ներս մտնող այցելուները կը հիանան անոր գեղեցկութեամբ ու չեն կրնար թաքցնել զարմանքը նկատելով հսկադրութիւնը Այնճարի եւ անոր շրջապատին միջեւ:

1939ի կիսանապատային Այնճարը այսօր մաքուր, կանաչազարդ գիւղի մը վերածուած է եւ զբոսաշրջութեան բնագաւառին մէջ մեծ հետաքրքրութիւն կը ներկայացնէ: Ամէնէն ուշագրաւ կէտերէն մէկը, որ հեռուէն կը նկատուի, անոր արտաքին «կառուցուածք»ն է: Արծուածել, օրինաւոր եւ համաչափ փողոցներով ամբողջութեամբ կանաչ գիւղ մը, միակը իր տարածքին մէջ, որ ունի օրինաւոր նախագիծ:

Աշխարհագրական եւ կլիմայական պայմանները մեծ առաւելու-

թիւններ ունին: Անոր դիրքը իրայատուկ է: Կը գտնուի Դամասկոս - Պէյրութ միջազգային մայրուղիի եզերքը եւ երկու մեծ քաղաքներուն գրեթէ մէջտեղը: Ծովէն 900 մէթր բարձրութեան վրայ, օդը կիսաչոր է եւ ամառուան տաքին առիթ կ'ընծայէ զբոսաշրջիկներուն՝ վայելելու զով հանգիստ մը Այնճարի ծառաստաններուն ու սրճարաններուն մէջ: Զուրով հարուստ է, ունի երկու գետ, բազմաթիւ ջրհորներ: Նոյնիսկ վարուցանքի համար օգտագործուող ոռոգման ջուրը մաքուր խմելու ջուր է ու զերծ՝ թափօններէ: Սա առողջապահական մեծ նշանակութիւն ունի եւ հազուագիտ պարագայ է մանաւանդ Լիբանանի մէջ:

Օդի ապականութեան մասին խօսք անգամ կարելի չէ ընել: Ծառաշատ բնութիւնը թթուածինով աւելի կը հարստացնէ արդէն իսկ մաքուր օդը: Այստեղ չկան բազմաթիւ ինքնաշարժներ ու հսկայ գործարաններ, որ ապականեն օդը կամ իրենց աղմուկով խանգարեն զբոսաշրջիկներուն հանգիստը:

Տեսարժան վայրերու կողքին այցելուներուն համար մեծ հետաքրքրութիւն կը ներկայացնէ պատմական եւ հնագիտական արժէք ներկայացնող Քալքիս բերդաքաղաքի անաւանները, որ Լիբանանի ամենանշանաւոր հնութիւններէն մէկն է:

Բացի գիւղը ամէն օր այցելող զբոսաշրջիկներէն, ամառը այստեղ կու գան հանգստանալու Պէյրութէն, Դամասկոսէն, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներէն, Քանադայէն եւ այլ շրջաններէ բազմաթիւ մուսալեոցի եւ այլ հայեր: Ամառնային այս ներհոսքը ունի իր պատճառները: Այնճարը զուտ հայկական միջավայր մը եւ ապահով շրջան մըն է: Մարդոց հանգիստը խանգարող պատճառներ չկան: Ապահովութեան, հիւրասիրութեան եւ փոխհասկացողութեան մթնոլորտը առիթ կու տայ դուրսէն եկողներուն՝ շատ արագ շաղուելու տեղի ժողովուրդին հետ եւ ապահով, հանգիստ եւ «անհոգ» ամառնային արձակուրդ մը անցընելու:

Այնճարի բարգաւաճումը շարունակ ընթացքի մէջ է: Կը շարունակուին կառուցուիլ ճաշարաններ, սրճարաններ, մանկական խաղավայրեր, հիւրանոցներ, եւ 21րդ դարու զբոսաշրջութեան բնագաւառին մէջ արդէն Այնճարը սկսած է իր տեղը գտնել:

ՏՈՔԹ. ԽԱԺԱԿ ԱՅՆԹԱՊԵԱՆ



# ԱՌՈՂՋԱՊԱՏՈՒԹԻՒՆԸ ԱՅՆՃԱՐԻ ՄԷՋ

Այնճարը, գիղատնտեսության եւ արհեստներուն կողքին նաեւ յայտնի է իր բժշկական համեստ բայց լաւ կազմակերպուած ծառայութիւններով:

Խօսելով Այնճարի մէջ բժշկութեան մասին, նախապատուութիւնը կու տանք ԼՕԽԻ «Աղթամար» մասնաճիւղի անսակարկ ներդրումին:

ԼՕԽԻ «Աղթամար» մասնաճիւղի «Ֆիլիանճէսեան» կեդրոնին մէջ ժողովուրդին կը մատուցուին անվճար եւ խորհրդանշական վճարումով բժշկական ծառայութիւններու շարք մը: Այսպէս՝ դարմանատան մէջ անվճար կը կատարուի (օրական դրութեամբ) ասեղի սրկում, արեան շաքարի քննութիւն, արեան ճնշման չափում, եւ այլն, իսկ խորհրդանշական վճարումով կը կատարուի սրտի ժապաւէն, ականջի լուսցում, վիրակապում եւ բժիշկի ստուգում: Դարմանատունը նաեւ չնչին գումարով դեղեր կ'ապահովէ ամսական դրութեամբ քրոնիք հիւանդութիւններով տառապողներուն համար (շաքարախտ, սրտի հիւանդութիւն, լուսնոտութիւն, եւ այլն...): Դարմանատան մէջ օրական կայ բժիշկ, ամէն օր տարբեր մասնագէտ մը, ինչպէս՝ ընդհանուր վիրաբուծ, ներքին հիւանդութիւններ, սրտաբան, տարբեր մասնագէտներ:

Դարմանատունը ունի նաեւ համաձայնութիւններ հիւանդանոցներու եւ տարրալուծարաններու հետ, որոնք իրենց կարելին կ'ընեն նեցուկ կանգնելու կարիքաւորներուն յատկապէս եւ ժողովուրդին ընդհանրապէս, հնարաւոր չափով աժան գիներով մատուցելով իրենց ծառայութիւնները՝ դարմանատան հաստատագիրով ներկայացողներուն:

Դարմանատան յատուկ քարտով կարելի է նաեւ այցելել մասնագէտներու՝ անոնց անձնական դարմանատուներուն մէջ, ինչպիսիք են՝ մաշկաբան, ակնաբուծ, սրտաբան, ատամնաբուծ, գլխու եւ տիւքի մասնագէտ, գեղձերու մասնագէտ եւ այլ մասնագէտներ:


Բժշկական ծառայութեան զուգահեռ մասնաճիւղը նաեւ ժողովուրդին կը ներկայացնէ դասախօսութիւններ՝ բժշկական եւ ընկերային տարբեր միութեան: Մասնաճիւղի այլ ասպարէզներէն են ձեռային աշխատանքները, աւանդական ճաշերու պատրաստումը եւ տարեցներուն պատուելը: Տարեցներուն համար տարեկան դրութեամբ կը կազմակերպուին պտոյտներ դէպի տարբեր գրօսավայրեր, եւ ճաշկերոյթներ:

Գարակէօզեան դարմանատունը գիղիս մանկաբուծութեան ծանր բեռը կը կրէ: Կազմակերպուած ձեւով կը կատարուին մանկական հիւանդութիւնները կանխարգիլող պատուաստումներ, դարմանատունը ունի իր ատամնաբուծարանը եւ մանկաբուծը: Դարմանատունը կը ծառայէ մանուկներէն մինչեւ 16 տարեկան պատանիներուն:

Գիղիին մէջ կը գործեն նաեւ ներքին հիւանդութիւններու երկու բժիշկներ (թոքային եւ սրտային մասնագէտ) եւ երեք ատամնաբուծներ:


ՏՈՔԹ. ՓԱՆՈՍ ԹԱՍԼԱՔԵԱՆ

# ԴԷՊԻ ՆՈՐԱՆՈՐ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐ



2003ին Այնճար հայաւանի բարգաւաճման ու բարեգարդման աշխատանքները, հետզհետէ շերմացող գարնան հետ մեծ թափով շարունակուեցան եւ շնորհիւ Այնճարի քաղաքապետութեան ու պատասխանատու մարմիններուն՝ կարելի եղաւ իրագործել հիմնական քանի մը ծրագիրներ, ինչ որ ե՛ւ երեւութապէս ե՛ւ մանաւանդ կենսոլորտի ու մաքրութեան իմաստով նոր որակ տուաւ Այնճարին:

Արդարեւ, գիղիին մուտքի մայր պողոտան ամբողջութեամբ փոփոխութեան ենթարկուե-



ցաւ: Ծամբան անհամեմատ լայնցաւ եւ երկու կողմերը օժտուեցան մայրերով: Գիղ այցելողներուն ուշադրութիւնը ամէն բանէ առաջ կը գրաւէ այն ծաղիկներուն տեսքն ու բոյրը, որոնք արդէն սկսած են աճիլ՝ մայր ճամբան մէջտեղէն բաժնած ծաղկանոցին մէջ:

Այսօր, գիղի բնակիչներուն փափաքած եւ երկար տարիներ քաղաքապետութեան կողմէ հետապնդուած մէկ այլ եւ շատ կարեւոր ծրագիրը իրագործուած կարելի է համարել: Քանի մը տարիներու տքնաջան աշխատանքէն ետք, գիղին մէջ սկսաւ գործել կոյուղին: Առողջապահական թէ կենսոլորտի մաքրութեան իմաստով վերոյիշեալ ծրագրին իրագործման զուգընթաց կարելի եղաւ նաեւ լուծել Այնճար հայաւանի աղբանոցի հարցը: Ծնորհիւ քաղաքապետական խորհուրդի թափած ճիգերուն ներկայիս նախկին աղբանոցը փակուած է, կրակը մարած եւ փոխանակ ծուխի ու թունաւոր միջատներու՝ արեւելեան քամին իրեն հետ կը բերէ առողջարար օդ ու շերմութիւն:

Գեղեցիկ ու օրինակելի է Այնճարը իր տեսքով ու մաքրութեամբ այդպէս կը վկայեն դրացի գիղերու բնակիչները: Այնճարը սակայն կը պատկանի հայութեան եւ Այնճար հայաւանի բարիքներէն օգտուելու իրաւունք ունին միայն անոնք, որոնք իրենց երազներուն մէջ բարգաւաճ ու հօգօր Հայաստանը կը տեսնեն եւ իրենց կուրծքին տակ Արարատը կանգուն կը պահեն:

Վարձքը կատար Այնճարը կանգուն պահող ու շէնցնող բոլոր հերոսներուն:

ՅԱԿՈՒ ԱՅՆԹԱՊԼԵԱՆ

# ՏԱՅՈՑ ԼԵՌՆԵՐՈՒ ԽՈՐՏՈՒՐԴԸ

«Լեռներիդ՝ վրայ, լեռներիդ մէջ է քո փրկութիւնը, արդ տաճարներուդ մէջ խաչքարերիդ կողքին բարձրացուր մի մի ծայռ եւ պաշտէ եւ երկրպագէ, որ չթուլանայ փրկարար պաշտամունքդ դէպի լեռներդ»:

Այս խօսքը Գ. Նժդեհի պատուիրաններէն մէկն էր՝ ուղղուած Սիւնիքի հայութեան, երբ ամբողջ լեռնահայաստան մը կը մղէր իր յաղթական գոյամարտը թուրք եւ պոլշեիկ կարմիր բանակներուն դէմ. հայոց լեռներուն մէջ անհաւասար կռիւներով յաղթական դուրս կու գային նժդեհեան «գայլերու վաշտեր»ը:

Այս պատուիրանը սակայն չէր վերապահուած միայն Սիւնեաց լեռնաշխարհին, այլ անհկա պատմական իրողութիւն մըն էր, երբ արդէն զէյթունցիւն եւ սասունցիւն ապաստան եւ յաղթանակ գտած էին իրենց լեռներուն մէջ: Այսպէս նաեւ 1915ին Մուսա Լեռը իր եօթը գիւղերով, ողջ հայութեամբ, կ'ապստամբէր եւ լեռ կը բարձրանար՝ իր կտորով «ոչ»ը ըսելով թրքական անմարդկային լուծին: Հայ ժողովուրդը միշտ եղած է խաղաղասէր, սակայն պարտադրուած պատերազմի ժամանակ շատ աւելի մարտունակ ու արի, քան թշնամիին ակնկալածը:

Մուսա լեռցիւն բարոյապէս գերազանցեց իր թշնամին եւ յաղթանակ տարաւ դեռ պատերազմը չսկսած: Ան քառասուն՝ օր տոկաց մարդկութեան դէմ ուղղուած ոճիրին եւ իր ընտրանի զաւակները



փրկեցին հայուն արժանապատուութիւնը, տուին 18 անատակներ եւ խաղաղութեան ճերմակ դրօշը պարզած՝ քաշուեցան նոր Աւարայրէն, վիրաւոր, սակայն երբե՛ք պարտուած:

Եւ այսպէս, տարիներ ետք, Մուսա Լեռը դարձաւ Մուսա Լեռ: Ո՛չ թրքական լուծը եւ ոչ ալ սովետական երկաթեայ ռեժիմը կրցան արմատախիլ ընել հայոց լեռներու խորհուրդը հայ ժողովուրդի ազատատենչ սրտէն: Ինչպէս Մուսա Լեռան, նոյնպէս Արցախի ազատ ապրելու անկոտորում կամքը հարուած տուաւ թուրք-ազերի վաշտերուն, որոնք չէին հաւատար հայոց լեռներու խորհուրդին, որ ապստամբութեան մղած էր Մուսա Լեռը, ապա ինքնիշխանութիւն տուած Սիւնիքին եւ այսօր արդէն անկախ է Լեռնային Ղարաբաղը, ո՛չ Ղարապաղ, այլ Արցախ անունով: Եւ դեռ շարանը երկար է, որովհետեւ մեր լեռները կը սպասեն իրենց զաւակներուն՝ Մովսէս Տէր Գալուստեաններուն, Գարեգին Նժդեհներուն եւ դաշնակցական Պետոներուն:

Եւ քանի որ հայոց աշխարհը լեցուն է լեռներով, ուրեմն՝ հայուն ապագան լեցուն է յաղթանակներով:

Ցեղասպան թուրքը եւ անոր որդին՝ Ազրպէյճանը, լաւ թող յիշեն մեր լեռներու խորհուրդը եւ գիտնան, որ «Մենք լեռն ենք տակաւին...»:

ՅԱԿՈՒԲ ԳԱՌՆԷՇԵԱՆ

## ՃԵՊԵԼ-ՄՈՒՍԱ

Կտոր մը ծայռ էր նետուած,  
Արեգակի լոյսին մէջ:  
Ոսկիներու մէջ աշնան:  
Կտոր մը ծայռ, ու ձմրան դառն մրրիկ:  
Չտաշուած խօսք էր մեծղի,  
- Հայկական հի՛ն փոխառութիւն  
Կատարներէ երկնամերձ եւ հոն անդուլ գոռացող  
Ամպրոպներէ-:  
Կտոր մը ծայռ էր յաւէտ,  
Նետուած ամրան տապին մէջ,  
Ու դեռ նետուած,  
Մանուշակի գոյներով  
Օրօրուող թարմ մշուշին,  
Որ ծովափնեա՛յ գարունէն  
Քուլա՛յ - քուլա՛յ կ'ելլէր վեր:  
Կտոր մը ծայռ էր մամոռտ,  
Ճէպէլ - Մուսան, տխուր քար,  
Բայց այնտեղ կար հպօր թըմբուկ,  
Որուն մէջէն տիրաբար  
Կարծես Աստուած կը գոռար  
Ուրախութեան կամքը իր:  
Ճէպէլ-Մուսան տեղ մըն էր  
Անդնդային շուքերով  
Ամպ ու անտառի հովանոցին տակ:  
Սեւ գիշերներու հեռաւոր անկիւն,  
Արեւ, լոռութիւն եւ անցնող քապէ:  
Նորէ՛ն սեւ գիշեր  
Կարմիր խարոյկի հայրենի՛ք էր ան:  
Ու վէնքի ձայն, ու երգի ձայն,  
Ու զօրութիւն:  
Դիպուեցաւ հոն լեղի դէպք,  
Դիպուեցաւ հոն լեղի ձայն,  
Դիպուեցաւ հոն թշնամի՛:  
Հայր եկաւ:  
Կտոր մը ծայռ սքանչելի,  
Նետուած յաւէտ արեգակի լոյսին մէջ,  
Չգեց ճրի.  
Եւ նախնեաց պէս տխուր, արի, ապատատենչ,  
Հայր ելաւ պանդխտութեան:

ԵԴՈՒԱՐԴ ՊՈՅԱՃԵԱՆ

1939, Պատիք

### ՀԱՆԴԻՍԱԲՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ ԵՒ ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 14 Սեպտեմբեր 2003ին, Այնճարի Ս. Պողոս եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր Ս. պատարագ պիտի մատուցուի: Պիտի պատարագէ եւ քարոզէ՝

#### ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ

(Առաջնորդ Լիբանանի Շայոց թեմին)

Սկիզբ ժամերգութեան՝	ժամը 8:00
Պատարագ՝	ժամը 9:30
Քարոզ՝	ժամը 11:00
Մատաղօրհներ՝	ժամը 12:00

Ս. պատարագի աւարտին յուշարձան համալիրին առջեւ հոգեհանգստեան արարողութիւն եւ մատաղօրհներ պիտի կատարուի հերոսամարտին ինկած նահատակներու հոգիներուն համար:

Սիրով կը հրաւիրենք մեր սիրելի ժողովուրդին զաւակները՝ մասնակցելու մեր ազգն ու հաւատքը պանծացնող այս տօնակատարութեան:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
Ս. ՊՕՂՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

www.aztagdaily.com

# ԵՕԹԸ ՄԵԾ ԹՄԲՈՒԿԻ ԿԱՇԻՆԵՐ

Ամառնային զով երեկոյ մը ընկերներով մխրճուած էինք աշխարհի կարեւոր նիւթերուն մէջ եւ ամէն մէկս կ'ուզէինք, ինչպէս այնքան ցինքնու սովորութիւնն է, զիրար գերազանցել ու սահմանել աշխարհի կարեւոր նկատուած երկիրներն ու քաղաքները: Երաժշտութիւնը տրուեցաւ Վիեննային՝ ստանալով 4/7ի վրայ ձայներու մեծամասնութիւնը: Երկրաչափութիւնն ու քաղաքաշինութիւնը գնաց Փրակա, «թէքնոլոճին» անշուշտ Ամերիկա, թուաբանութիւնը՝ Հնդկաստան, իսկ անտառամշակույթը՝ Քանադա: Տուրմի ճարտարարուեստը՝ Չուիցերիա: Պանիրը ունեցաւ մէկէ աւելի մայրաքաղաքներ: Երկար ու տաք վիճաբանութիւններէ ետք խնձորը գնաց Չիլի: Գրականութեան բաժակը ստացաւ Ռուսիան, իսկ Ռուսմանիան իր ճկուն մարզիկներով շահեցաւ մարմնամարզի մրցանակը: Անուշահոտերու մայրաքաղաքը դիրութեամբ որոշուեցաւ Փարիզը: Ինքնաշարժներու կեդրոն նկատուեցաւ Գերմանիան: Նաւաշինութիւնը գնաց Քորէա, իսկ Հայաստան՝ վիճաբանողներուն միասնականութեամբ շահեցաւ քոնիաքի ոսկի մետալը, իր «Վասպուրական» պիտակներով:

Առաւօտեան կանուխ ժամերուն, բարեկամ «քուէարկողներս» ցրուեցան իրենց տուները, բայց ես արդէն քունս կորսնցուցած էի, քանի որ Այնճարը չէր շահած որեւէ մրցանակ, նոյնիսկ Չիլիի խնձորները մէկ քուէով յաղթած էին մեծ հօրս պարտէզի խնձորներուն: Լուռ ու տխուր կը դիտէի երկնքի աստղազարդ կապոյտը, յանկարծ սկսայ ժպտալ: Այնճարը իր Մուսա Լերան ժառանգութիւնով կը շահի եօթը բաժակներ իմաստութեան եօթը սիւններուն պէս: Առաջին բաժակը՝ կեանքին կառչելու

վճակամութեան բաժակն է, քուէարկուած՝ 18 նահատակներու արիւնով: Երկրորդը իր յամառութիւնն է իր դրական ու քիչ մըն ալ ժխտական երեսներով: Երրորդը աշխատասիրութիւնն է կանաչապատ Այնճարով: Չորրորդը իր սրտի զուարթութիւնն է իր ծաղկած մանկապարտէզներով: Հինգերորդը իր գութն է իր լուռ աշխատողներով: Վեցերորդը իր մարդուծն է տրամադրուած անցեալի ու ներկայի հայկական գաղթօճախներուն՝ Քուէյթէն մինչեւ Քալիֆորնիա, Սիտնիէն մինչեւ Սինկափուր: Իսկ եօթներորդը - եօթներորդ մրցանակը կը ստանայ Մուսա Տաղցի «Ծիրում»ի արարքը, որ այս ամառ շփոթի մատնած էր Ռամասկոսի համբաւաւոր թմբուկի կաշի պատրաստողները: «Ծիրում»ը ուզած էր եօթը մեծ, շատ մեծ թմբուկի կաշիներ: Մասնաւոր ապսպրանք ու ժամանակ պէտք եղած էր հայթայթելու կաշիները: Ծիրումը կաշիի այս մեծ կտորները հետը տարաւ Քալիֆորնիա, Մուսա Լերան վրայ շինուած իր հօրմէ ժառանգած թմբուկին համար: Եօթը կաշին գալիք 7000 տարիներու համար:

Մուսա Լերան թմբուկը գործածուած է հարսանիքներու ուրախ ժամանակ, գաղթի



ճամբուն վրայ՝ կէս գիշերային սաստիկ փոթորիկի մը ներգաղթի արցունքներուն հետ, լիբանանեան քաղաքացիական պատերազմին ընթացքին, կնունքներու ու չհաւատալիք խենթութիւններու առիթներով: Ան տակաւին կը թնդացնէ ու կ'արթնցնէ բոլոր հայրողները, կը կանչէ զիրենք աշխարհի չորս ծագերէն, կը մկրտէ զանոնք հայու վճռակամութեամբ ու խիզախութեամբ եւ կը միացնէ զանոնք մէկ շուրջպարով:

Մուսա Լերան թմբուկը կը շահի իմ սրտիս բաժակը:

ՄԵՍՐՈՊ Ա. ՔԷՆՏԻՐՃԵԱՆ

Այնճար

## ՄՈՒՄԱ ԼԵՐԱՆ ՆԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Շարունակուած՝ Ա. Էջէն

պէս հարիր զոհ եւ վիրաւոր, իսկ հայերը՝ երեք զոհ եւ տասնեակ մը վիրաւոր:

Օգոստոս 11ին կազմուեցաւ կեդրոնական վարչական ժողով եւ զինուորական կեդրոնական վարչութիւն մը, որուն վերահսկիչ նշանակուեցաւ Մովսէս Տէր Գալուստեան, իր կողքին ունենալով երկու օգնականներ: Մարտական խումբերը կազմուեցան եւ բաժնուեցան 43 տասնեակներու:

19 Օգոստոսին թուրքերը մեծ յարձակողական մը շղթայազերծեցին Ֆախրի փաշայի հրամանատարութեան տակ: Երկու օր անընդհատ արհիւնահեղ մարտեր մղուեցան եւ քանի մը դիրքերու վրայ թուրքերը ճեղքեցին հայոց պաշտպանութեան գիծը, բայց չյաջողեցան յառաջանալ եւ աւելի քան հազար զոհ տալէ ետք նահանջեցին:

Այս անյաջողութենէն ետք թուրքերը հրաժարեցան նոր յարձակում շղթայազերծելէ եւ որոշեցին պաշարել լեռը ու սովամահ ընել հայերը: Անոնք լերան շուրջ տասնհինգ հազար զինուոր կեդրոնացուցին:

Մուսա լեռնիներուն վիճակը օրըստօրէ կը դժուարանար, որովհետեւ վերջանալու վրայ էին պարէնն ու զինամթերքը: Ինքնապաշտպանութեան ղեկավարները նախօրօք մտածած էին այս ուղղութեամբ եւ իրենց յոյսը դրած՝ դաշնակից մարտանաւերուն վրայ. ազդանշան տալու համար լերան ծովահայեաց լանջին երկու դրօշակներ բարձրացուեցան եւ պահակներ դրուեցան: Երկար ժամանակ սակայն հորիզոնին վրայ մարտանաւ չէր երեւեր:

Վերջապէս 5 Սեպտեմբերին երեւաց ֆրանսական «Կիշէն» մարտանաւը. հայ ներկայացուցիչները նաւապետ Պրիստնի պարզեցին

իրենց կացութիւնը եւ օգնութիւն խնդրեցին: Նաւապետը խոստացաւ հայերուն խնդրանքը հաղորդել Կիպրոս գտնուող ծովակալ Տարթիծ տիւ Ֆուռնիէի, որ իր կարգին պիտի դիմէր Փարիզ, ուրկէ պիտի գար վերջնական հրահանգը:

«Կիշէն» անմիջապէս սկսաւ նմբակոծել թրքական դիրքերը եւ հեռանալով՝ խոստացաւ օգնութիւն կազմակերպել:

7 Սեպտեմբերի առաւօտուն թուրքերը մեծ ուժերով յարձակում մը շղթայազերծեցին, բայց տասը ժամ տեւած ճակատամարտէ մը ետք, մեծ թիով զոհեր տալով քաշուեցան:

10 Սեպտեմբերին թուրքերը շղթայազերծեցին իրենց վերջին մեծ յարձակումը. ճակատամարտը վերջանալու վրայ էր, երբ երեւացին ֆրանսական երկու մարտանաւեր, որոնք սկսան նմբակոծել թրքական դիրքերը:

12 Սեպտեմբերին մուսա լեռնիները ծովափ իջնելով բարձրացան ֆրանսական «Կիշէն», «Տեսէքս», «Տեսթըթ», «Ամիրալ Շառնէ» եւ «Ֆոտր» մարտանաւերը, որոնք զանոնք փոխադրեցին Փոր Սայիտ, Եգիպտոս:

Ա. Աշխարհամարտի (1918) ամարտէն ետք, շուրջ չորս տարի Փոր Սայիտ մնալէ ետք, մուսա լեռնիք վերադարձան իրենց հայրենի օճախը, ուր գոյատեւեցին մինչեւ 1939, երբ ֆրանսացիներուն կողմէ Սանճազը Թուրքիոյ յանձնուեցաւ, անոնք ամբան ֆրանսացիներուն կողմէ փոխադրուեցան սուրիական ծովեզերեայ Պասիթ ամառը, ուրկէ նոյն տարուան աշնան «Վերջնականապէս» փոխադրուեցան Այնճար, Լիբանան:

# Ա Ն Պ Ա Ր Տ Ե Լ Ի Ն

Ովկիանոսի էությունը ըմբռնելու համար, պարունակած բոլոր ջուրերը տարբադադրելու պետք չկայ: Այդ գործին համար կաթիլն ալ կը բաւէ:

Մուսա Լեռը հայութեան ոգեկան «ովկիանոսին» այդ «կաթիլն» է ահա:

Եթէ, պահ մը ենթադրենք, վրայ տուած ըլլայինք ամբողջ «ովկիանոս»ը, եթէ բարբարոսը մեր հայրերու անհուններուն հետ մոխիրի վերածած եւ չորս հովերուն տուած ըլլար Հայոց Պատմութեան եւ Հայ Մշակոյթի վսեմական Մատենաը, Մուսա Լեռը պիտի բաւէր, որպէսզի հայութեան ոգեկան «ովկիանոս»ը կարելի ըլլար վերականգնել իր բովանդակ շքեղանքով, իր բազմախորհուրդ իսկութեամբ եւ իր հոյատեսիլ խորհուտանքով ու փառքով:

Եւ ո՞վ կրնայ պնդել, թէ Մուսա Լեռան բարձունքներուն վրայ, ափ մը մոռցուած, այլ արի հայորդիներու սրտին մէջ, հաստաբազուկ ու գանգրահեր Հայկը չէր, որ կը լարէր իր անբեկանելի աղեղը մեր օրերու գոռոզ ու արիւնարբու նոր Բէլին դէմ:

Հայկազեանց այդ անմեռ ոգին է ահա, որ կենսատրած է հայ կեանքի եւ Հայոց Պատմութեան բոլոր քառուղիները, լուսատրած է հայութեան բոլոր հորիզոնները բոլոր դարերուն, ներքին թէ արտաքին աշխարհի մէջ:

Հեքիաթի «անմահական ջուրը», անպարտելի այդ ոգին է Հայ Հոգիի բոլոր բարձունքներուն վրայ՝ անյիշատակ ժամանակներէ ի վեր եւ Հայկեան նետին հետ կ'երթայ միշտ առաջ՝ ժամանակի եւ տարածութեան բոլոր բաւիղներուն ընդմէջէն:

Նոյն այդ ոգին, ոգեկան անխորտակելի այդ միութիւնն է միշտ, որ կարմիր թելի պէս կ'անցնի հայոց պատմութեան բոլոր փուլերէն, բոլոր հանգրուաններէն եւ ծիածանի պէս կամար կը կապէ հայ ստեղծագործ

հանճարի ու հայ մարտական ուժի բոլոր սխրագործութեանց վրայ: Եւ թէ եւ երեսութեամբ յաճախ «կաթիլ» մըն է միայն, սակայն «ովկիանոս»ի մը անդիմադրելի ուժականութեամբ կը վարարէ հայ հոգիները, կը ջրդեղէ մեր կամքը եւ դէպի յաւերժութիւն կ'առաջնորդէ մեր քայլերը՝ «փոքրիկ քարվանի» մը պատկերով:

Եթէ չըլլար ոգեկան այդ ուժականութիւնը, կարելի՞ էր երեսակայել հայ ֆետային, կարելի՞ էր Սասուն, Վասպուրական, Զէյթուն, Ծապին Գարահիսար, Ուրֆա, Մուսա Լեռ եւ... Սարդարապատ ունենայ հայոց պատմութեան ամէնէ՛ն արիւնոտ, ամէնէ՛ն մոռյլ եւ ամէնէ՛ն ճակատագրական շրջանին:

Էականը ոգին է, անշուշտ, որ մի է եւ անբաժանելի հայոց պատմութեան արշալոյսէն սկսեալ մինչեւ այսօր, մինչեւ վաղը եւ մինչեւ յաւերժութիւն:

Ահա թէ ինչու մի եւ անբաժանելի են նաեւ Սասունը, Վասպուրականը, Ուրֆան, Մուսա Լեռը եւ մնացեալները, հայոց աշխարհի մէկ ծայրէն միւսը:

Ահա թէ ինչու, միաժամանակ, պատմելի մէկը, կը նշանակէ ներկայացնել միւսը, խօսիլ մէկուն մասին, կը նշանակէ ապրիլ երրորդը եւ այսպէս շարունակաբար:

Հայ ոգին, հայ մարտունակ ոգին ամէնէն վսեմ, անըմբռնելի, այլ քաղցրօրէն իրաւ մէկ սխրանքն է Մուսա Լեռը, միւսներուն հետ եւ միւսներուն քովն ի վեր:

Ս. ԶԵՅԹԼԵԱՆ

## ՏԱՂԱՆԴ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

... Ինքնապաշտպանութեան մեր անկրկնելի խոյանքներուն մէջ՝ Մուսա Լեռան ժողովուրդին յայտնաբերած արիութիւնը միայն հայոց պատմութեան մէջ արձանագրուած որակ մը չմնաց, այլ՝ դուրս եկաւ մեր սահմաններէն ու առաջին մէկ օրէն գտաւ համաշխարհային նանաչում:

Հայկական շար բախտին մէջ փայլփլող այս բարեբախտ կէտին առնչութեամբ՝ անուրանալի է ու անուրանալի՝ կը մնայ Վերֆէլի նպաստը, որ իր տաղանդով լոյսի մէջ առաւ ամբողջ դրուագը եւ անոր բարոյական անհատնելի հարստութիւնը ընծայեց ո՞ղջ աշխարհին:

Տաղանդ եւ բարոյական հարստութիւն:

Մէկը միւսով սնած, մէկը միւսով լրումի ու պսակի հասած երկու ուժեր, որոնք անպայման տարբեր եւ անպայման՝ նուազ փայլուն վարկ մը պիտի ունենային նաեւ ա՛յս պարագային, եթէ բախտաւոր վայրկեան

եանի մը չհանդիպէին իրարու, պակսէր իրենց գիրար շնչաւորելու գործութիւնը:

Այդ պարագային, Մուսա Լեռը հաւանաբար այսքան չհայանար ու չհսկայանար՝ այսքան եւ անոր առաջին մեծ երգիչը համարուող Ֆրանց Վերֆէլը չունենար թերեւս այն մեծ համբաւը, որ ունի այսօր մշակոյթ ունեցող համարեա՛ր բոլոր ժողովուրդներուն մօտ:

Տաղանդ եւ բարոյական հարստութիւն:

Ով գիտէ քանի՛ անգամ ըսուած է եւ քանի անգամ հաստատած ենք, որ ընդդէմ մահու արիացեալք Վարդանանքը աննշան դրուագ մը պիտի մնար հայոց պատմութեան մէջ, եթէ չըլլար զայն վերակերտող ու հրաշակերտող Եղիշէն, ու Եղիշէն սովորական դպիր մը պիտի ըլլար անտարակոյս եթէ իրենց վարդագոյն արեամբ գաղափար մը սրբագործելու աստուածային ստորոգելիներով օժտեալներ չցցէին իրենց հասակը գաղափարամերժ բրտութեան դիմաց:

Բարոյական հարստութիւն ու տաղանդ:

Վարդանանք եւ Եղիշէ:

Մուսա Լեռ եւ Վերֆէլ:

Եւ անշուշտ նոյն դէպքերուն կապուած ուրիշ միջոցներով դրսեւորուած անձեր, բանաստեղծներ, թատերագիրներ, երգահաններ, լոյս, շարժում, կշռոյթ:

Կեանք:

Մահուամբ մահը կոխելու խոյանքի եւ ներքին հրավառութեան ամուսնութիւն: Գաղափարական սաղմնաւորում:

Այսպէս անցանք պատմութեան քառուղիներէն ու հայ ժողովուրդը կեանքը կը շարունակէ նոյն գործութիւններէն սնանելով եւ ա՛յսօր:

Պ. ՄՆԱՊԵԱՆ

**ԱԶԳԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ՓԱՌԱՏՕՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ**

Կ'երգէ սիրուած երգիչ ԳՕԳՕ ԹԻԹԻԻՆՃԵԱՆ, մասնակցութեամբ՝ աւանդական տիոլ զուռնային:

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 13 Սեպտեմբեր 2003, երեկոյեան ժամը 10:00էն սկսեալ, Մուսա Լեռան հերոսամարտի յուշարձանին կողքին:

Ը. Յ. Ղ. «ԿԱՐՍԻՐ ԼԵՐ» ԿՈՍԻՏԵԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԱՐՍԻՆ

www.aztagdaily.com

